Միգուզ 1835 · 'ի 5 Նոյեմբերի · Յովհաննէս վարդապետ միայն դարձաւ յԱթոռն, և յետ ժամանակաց ետ բերել զսկեսրս Եղիայի և թաղեաց 'ի գերեզմանատան Ս· Փրկչի, 1848 · 'ի 4 Օգոստոսի ։

ԳԼՈՒԽ ԾԲ·

Առաքումն Կիրակոս Եպիսկոպոսի 'ի Կոստանդինուպոլիս ։ Հիմնարկութիւն ճեմարանին ։ Գիր Ամիրայից առ Պօղոս Եպիսկոպոս ։ Պարտք Փոխանորդին ։ Խնդիր Ասորւոց ։ Սկիզբն շինութեան Համբարձման եկեղեցւոյն ։ Ընդդիմութիւն Յունաց և Լատինաց ։ Բացումն դրան Լատինաց 'ի Բեթղեհեմ ։ Ջանք Հայոց վասն շինուածոց Համբարձման ։ Հրովարտակք Լատինաց ։

ԾԱՅՐԱԳՈՅՆ Գործակալ Աթոռոյն Երուսաղէմի Պօղոս Եպիսկոպոս յետ կատարելոյ զտօն Ս· Պասեքին առաքեաց ընդ ուխտաւորս տարւոյն 'ի Կոստանդինուպոլիս զՏ· Կիրակոս Եպիսկոպոս՝ յաղագս կարեւոր գործոց Աթոռոյն, յանձն արարեալ նմա զտումար արդեանց և ծախուց վանաց, զորս բազում անգամ թախանձանօք խնդրեալ էին Ամիրայք, զկնի իսպառ աղատելոյ Աթոռոյն 'ի պարտուց, և բարեկարգելոյ զվիճակ միաբանութեան ։ Եհաս Կիրակոս 'ի թագաւորեալ քաղաքն, եւ զորս 'ի համբաւոյ լուեալն էր իսկապէս ետես աչօք իւրովք զպայծառութիւն եկեղեցեաց, զբարեկարգութիւն դպրոցաց և զխոհական կառավարութիւնս նոցա, զհոգ և զխնամածութիւն հիւանդաց, աղքատաց և այլոց, որք չինեալ և հաստատեալ էին ազգասէր ջանիւք և աշխատութեամբ բարենախանձ ազգապետաց, ուրախ եղեւ յոյժ ։

Եւ քանզի իշխանաւորք ազգին երկնչին հանապազ 'ի միտս իւրեանց և փափաքանօք տենջային հաստատել ազգային ուսումնարան մեծ 'ի դաստիարակութիւն մանկտւոյն, զի մի յաճախեսցեն առ օտարս, եւ փոխանակ վարդապետութեան հայրենի եկեղեցւոյ, ուսանիցեն զդաւանութիւն օտարին և զայլ և այլ սովորութիւնս նոցին, որ 'ի սմին ժամանակի սկսեալ էր տարածանիլ ։ Եւ յարդիւնս